

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ

I. ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

1. Ոռոգման համակարգի ֆինանսական առողջացման աջակցության ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) կողմից:

2. Սույն ծրագրում ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում ոռոգման համակարգի ֆինանսական առողջացմանն ուղղված միջոցառումներն ու դրանց ապահովման մեխանիզմները:

3. Ծրագիրը հիմնականում անդրադառնում է՝

1) ոռոգման համակարգի շահագործման ծախսերի կրճատմանը.

2) մեխանիկական ջրարտադրության փոխարինմանն ինքնահոսի.

3) մեխանիկական ջրարտադրության համակարգի արդիականացմանը.

4) ոռոգման համակարգերի պահպանմանը և անվտանգ շահագործմանը.

5) ծախսերի արդյունավետության բարձրացմանը.

6) ջրակորուստների կրճատմանը, ջրաչափական սարքերի տեղադրմանը, ջրի հաշվառման համակարգի արդիականացմանը.

7) սոք դեբիտորական պարտքերի գոյացման կանխարգելիչ մեխանիզմների ներդրմանն ապատակով պարտադիր վճարման երաշխիքների ստեղծմանը:

## II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

4. Ծրագիրը մշակվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման 10-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջների:

5. Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 10 մլն եվրո գումարի չափով թիվ CAM 1002 06 D ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում որպես ծրագրի բաղադրիչներ նախատեսվում է իրականացնել ջրային համակարգի նոր ուսումնասիրության մշակում, որը կհաստատվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

6. Զրոգտագործողների ընկերությունների գործունեության հետ կապված, համակարգում ֆինանսական ճեղքվածք առաջանում է հատկապես մեխանիկական ջրարտադրության ծախսատարության պատճառով:

7. Կուտակվող պարտքերի գոյացումը հնարավորինս կանխարգելելու նպատակով կոմիտեն իրականացրել է մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

1) մատակարարված ոռոգման ջրի հստակ հաշվառում իրականացնելու նպատակով մեկնարկել է ոռոգման ջրամատակարարման համակարգերում ջրառի կետերը՝ մայր ջրատարներից մինչև ներտնտեսային ցանցի բաժանարար հանգույցները, ժամանակակից ջրաչափական սարքերի հազեցնելու գործընթացը՝ դրանք միացնելով SCADA (Supervisory Control And Data Acquisition- կարգավարական/դիսպետչերական հսկողություն և տվյալների ձեռքբերում) համակարգին, ինչը հնարավորություն կընձեռի առցանց հսկողություն իրականացնել ջրի տեղաշարժի, կորուստների և համակարգում առաջացող վթարների արագ արձագանքմանը.

2) ջրոգտագործողների ընկերությունների կողմից առձեռն կատարվող հավաքագրումները բացառելու նպատակով «Զրոգտագործողների ընկերությունների և ջրոգտագործողների

ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5.1-ին հոդվածի 2-րդ մասի «բ» կետով կանոնակարգվել են նաև բացառապես բանկային և (կամ) փոստային եղանակով գանձումներ կատարելու մեխանիզմները: Ներկայումս ջրօգտագործողներն օգտագործած ոռոգման ջրի դիմաց վճարումները կատարում են նաև հեռախոսի, համակարգչի, տերմինալի կամ այլ ժամանակակից մեթոդների միջոցով, ինչի հետևանքով շրջանառությունից դուրս են եկել նախկինում առձեռն տրվող գանձման կտրոնները.

3) կոմիտեի կողմից առցանց եղանակով հսկողություն է սահմանվել նաև ջրօգտագործողների ընկերությունների բանկային հաշիվներից իրականացվող ծախսերի նկատմամբ:

8. Ժամանակի ընթացքում համակարգի ծախսերի զգալի նվազեցման կրեքի նաև ջրօգտագործողների ընկերությունների հաշվապահական հաշվառման կենտրոնացումը:

9. Ոլորտի ֆինանսավորման ուղղությամբ առկա են որոշակի գործոններ՝

1) ներկայումս շարունակվում է կիրառվել նախորդ տարիներին կուտակված պարտքերը հաջորդ տարի փոխանցելու պրակտիկան: 2019 թվականի տարեկան գործունեության արդյունքներով տարին ավարտվել է 1,977.66 մլն դրամ կրեդիտորական պարտքով, որից միայն 1,116.02 մլն դրամը ջրօգտագործողների ընկերությունների կողմից «Զբառ» փակ բաժնետիրական ընկերությանը: 2019 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված 3798,98 մլն դրամ («Ոռոգման համակարգի առողջացում» ծրագիր) և 3,636.76 մլն դրամ գումարներից («Աջակցություն ոռոգման համակարգի ընկերությունների ֆինանսական կենսունակության բարելավման նպատակով իրականացվող միջոցառումներին» ծրագրի) 7,435.74 մլն դրամ ընդհանուր գումարով սուբսիդիան հիմնականում ուղղվել է էլեկտրաէներգիայի պարտքերի մարման համար 2018 թվականին վերցված վարկային միջոցների գծով պարտավորությունների մարմանը.

2) ռոռզման ոլորտի ֆինանսական աջակցության նվազումը: 2018 թվականին տրամադրվել է 4,661.82 մլն դրամ, 2019 թվականին 3,636.76 մլն դրամ սուբսիդիա, իսկ 2020 թվականի համար՝ 2,856.01 մլն դրամ:

10. Համակարգում առկա խնդիրների լուծման նպատակով կոմիտեն Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացնում սույն ծրագիրը:

### III. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

11. Ոռոզման համակարգերի ֆինանսական առողջացման ապահովման համար անհրաժեշտ է՝

- 1) ծախսերի արդյունավետության բարձրացում.
- 2) ռոռզման համակարգի շահագործման ծախսերի կրճատում.
- 3) մեխանիկական ջրարտադրության համակարգի արդիականացում.
- 4) ռոռզման համակարգի պահպանում և անվտանգ շահագործում.
- 5) ռոռզման ջրամատակարարման դիմաց մուտքերի ապահովում
- 6) մեխանիկական ջրարտադրության փոխարինումն ինքնահոսի.
- 7) ջրակորուստների կրճատում, ջրաչափական սարքերի տեղադրում, ջրի հաշվառման համակարգի արդիականացում.

8) նոր դեբիտորական պարտքերի գոյացման կանխարգելիչ մեխանիզմների ներդրման նպատակով պարտադիր վճարման երաշխիքների ստեղծում:

12. Ոռոզման համակարգերի ֆինանսական առողջացմանը խոչընդոտում են համակարգում առկա հետևյալ խնդիրները՝

- 1) համակարգում ռոռզման ջրի առկա մեծ կորուստների առկայությունը.
- 2) մեխանիկական ջրարտադրության ծախսերի համեմատաբար մեծ կշիռը ռոռզման ջրի ընդհանուր ծախսերի մեջ.

3) ռոռզման համակարգի մաշվաձոթյունը և դրանով պայմանավորվաձ ջրակորուստների մեձոթյունը, ընթացիկ ներդրումների անհրաձեշտոթյան շարունակական աձը.

4) մեխանիկական ջրարտադրոթյան պոնպային սարքավորումների ֆիզիկական և բարոյական մաշվաձոթյունը, դրանց շահագորձման հետ կապվաձ էլեկտրաէներգիայի ձախսերը.

5) ռոռզման տարաձքներում ջրապահանջարկի նկատմամբ ռոռզման ջրի անհամաչափ բաշխվաձոթյունը.

6) ջրոգտագորձողների հետ կնքվող պայմանագրերում թերվձարումների կանխման մեխանիզմների բացակայոթյունը.

7) նախորդ տարիներին կուտակվաձ, տարեցտարի փոխանցվող դերիտորական պարտքերի բացասական ազդեցոթյունը համակարգի ընթացիկ տարվա ֆինանսական գորձունեոթյան վրա:

#### IV. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

13. Սույն ձրագրի 3-րդ գլխում ներառվաձ նպատակներին հասնելու համար՝

1) անհրաձեշտ է կրձատել ռոռզման ջրի կորուստները.

2) ռոռզման համակարգերի տեխնիկական վիձակը պահպանելու, ընթացիկ նորոգումներն ապահովելու, վթարավտանգ իրավիձակների հավանականոթյունը կանխարգելելու նպատակով անհրաձեշտ է իրականացնել ռոռզման համակարգի հիմնանորոգման ամենամյա ձրագիր, որը հաստատվում է յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետոթյան պետական բյուջեի մասին օրենքով.

3) ռոռզման ջրի ընդհանուր ձախսերի ձավալի մեջ մեխանիկական ջրարտադրոթյան կշիռը նվազեցնելու նպատակով անհրաձեշտ է վարկային, դրամաշնորհային ձրագրերը

նպատակաուղղել մեխանիկական ջրարտադրությունից ինքնահոս ոռոգման համակարգի անցման ապահովմանը.

4) Հայաստանի Հանրապետությունում ջրամբարաշինությունը հիմնականում իրականացվում է վարկային միջոցների ներգրավմամբ, որն էլ ավելի է թանկացնում, ինչպես ջրամբարի կառուցման, այնպես էլ ոռոգման ջրի ինքնարժեքը, հետևաբար անհրաժեշտ է իրականացնել ներկայումս որդեգրված պետական-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ակտիվացման քաղաքականություն, որի շրջանակներում նպատակահարմար է իրականացնել նաև փոքր և միջին ջրամբարաշինության ծրագիրը՝ կիրառելով մասնավոր հատվածի համար գրավիչ մոտեցումներ.

5) մեխանիկական ջրարտադրության պոմպային սարքավորումների ֆիզիկական և բարոյական մաշվածության պատճառով մեծ են դրանց շահագործման հետ կապված էլեկտրաէներգիայի ծախսերը: Ամբողջ համակարգը, քիչ բացառությամբ, ենթակա է փոփոխման և արդիականացման: Կարիքների գնահատման և ծրագրային լուծումներ տալու նպատակով անհրաժեշտ է իրականացնել նախնական ուսումնասիրություն.

6) նպատակահարմար է պոմպակայանների սպասարկումն ու արդիականացման աշխատանքները հանձնել մասնագիտացված կազմակերպության, որը հանձն կտնի բոլոր փոխարինման ենթակա պոմպային սարքավորումների արդիականացման իրականացումն ու ընթացիկ սպասարկումը, որի արդյունքում կառաջանա էլեկտրաէներգիայի ծախսի խնայում և շահագործման ծախսերի կրճատում և որոշակի ժամանակահատվածում կստանա եկամուտ, համակարգն իր հերթին կարդիականացվի.

7) մատակարարված ոռոգման ջրի հստակ հաշվառում իրականացնելու նպատակով ոռոգման ջրամատակարարման համակարգերում անհրաժեշտ է ջրառի կետերը և մայր ջրատարներից մինչև ներտնտեսային ցանցի բաժանարար հանգույցները, որոնց ընդհանուր քանակը շուրջ 2100 է, բերել պատշաճ վիճակի՝ կարգաբերելով և հագեցնելով դրանք ժամա-

նակակից ջրաչափական սարքերով և համապատասխան կառավարման կենտրոնով: Նախնական գնահատականներով նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերումը և աշխատանքների իրականացումը կազմում է շուրջ 1,500.0 մլն դրամ: Ներկայումս Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հուլիսի 25-ի N 950-Ն որոշմամբ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով կոմիտեին տրամադրվել է 44,9 մլն դրամ գումար: Կազմակերպված մրցութային գործընթացի արդյունքում կնքվել է 41.28 մլն դրամի նախագծային աշխատանքների պայմանագիր:

8) անհրաժեշտ է ավարտին հասցնել էլեկտրաէներգիայի ավտոմատ հաշվառման և հսկման համակարգով («ACKYՅ») աշխատող էլեկտրական հաշվիչների տեղադրման գործընթացը՝ ստեղծելով միացյալ ինֆորմացիոն հարթակ: Իրականացնել վերը նշված («ACKYՅ») համակարգի ինտեգրացիա ջրի կառավարման աշխարհագրատեղեկատվական («GIS») ջրի կառավարման համակարգի մեջ: Տվյալները, որոնք ստացվում են էլեկտրական հաշվիչներից առցանց տարբերակով, ավտոմատ կտեղակայվեն ջրի կառավարման ծրագրում՝ համապատասխան հաշվետվության մեջ:

9) հաշվապահական հաշվառման վարումը հանձնել պատվիրակված մասնագիտացված կազմակերպության՝ հաշվառման և հաշվետվողականության կենտրոնացման ու նույնականացման նպատակով: Այդ առումով անհրաժեշտություն է առաջացել մշակել ջրօգտագործողների ընկերությունների հաշվապահական և կառավարչական հաշվառման վարման միասնական քաղաքականություն: Մի շարք գործառույթների կրկնությունը բացառելու նպատակով, հաշվապահական հաշվառման տվյալների հավաստիությունն ապահովելու և այդ տվյալների հիման վրա վերլուծություններ կատարելու, եզրակացություններ և գնահատականներ տալու համար նպատակահարմար է ջրօգտագործողների ընկերությունների հաշվապահական հաշվառման վարումն իրականացնել պատվիրակված և մասնագիտացված կազմակերպության միջոցով:

## V. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

14. Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք ինքնահոս եղանակով մատակարարվող ջրի կշռի, հաշվառվող ոռոգման ջրի ծավալների և հասույթների մեծացում, ոռոգման համակարգի տեխնիկական վիճակի բարելավում, ցանցի ընդլայնում, փոքր ջրամբարների շինարարության իրականացման միջոցով ոռոգման ջրի հավասարաչափ բաշխվածության (դիվերսիֆիկացիայի) ապահովում, ինչը հնարավորություն կտա ոռոգման համակարգի ընկերություններին նախապատրաստելու (ամբողջ համակարգի կամ ըստ առանձին բաղադրիչների) պետական-մասնավոր գործընկերության:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ



Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2020 թվականի  
հուլիսի 2-ի N 1144 - Լ որոշման

Չ Ա Փ Ա Ք Ա Ն Ա Կ Ն Ե Ր

2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌՈՂՋԱՑՄԱՆՆ  
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

(հազ. դրամ)

NN ը/կ	ՋՕԸ-ի անվանումը	ՀՀ պետական բյուջեից աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը
1.	Երևան	55,705.2
2.	Արտաշատ	212,594.6
3.	Արարատ	195,848.3
4.	Արմավիր	300,387.6
5.	Էջմիածին	319,424.3
6.	Շենիկ	46,475.0
7.	Արագածոտն	30,408.6
8.	Թալին	162,081.7
9.	Կոտայք	94,455.1
10.	Գեղարքունիք	108,191.0
11.	Շիրակ	50,043.6
12.	Տավուշ	91,505.6
13.	Լոռի	28,986.5
14.	Եղեգնաձոր	18,576.9
15.	Սյունիք	81,124.5
Ընդամենը		1,795,808.6

ՀԱՇՎԱՐԿ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌՈՂՋԱՑՄԱՆՆ  
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԶՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ

(հազ. դրամ)

NN ը/կ	ՋՕԸ-ի անվանում	2020 թ. ՋՕԸ-ի ֆինանսական ճեղքվածքը	ՀՀ պետական բյուջեից աջակցություն ուղղման համակարգի առողջացմանը*
1.	Երևան	251,707.4	55,705.2
2.	Արտաշատ	960,621.5	212,594.6
3.	Արարատ	884,952.1	195,848.3
4.	Արմավիր	1,357,319.4	300,387.6
5.	Էջմիածին	1,443,338.0	319,424.3
6.	Շենիկ	210,000.0	46,475.0
7.	Արագածոտն	137,403.0	30,408.6
8.	Թալին	732,376.0	162,081.7
9.	Կոտայք	426,801.2	94,455.1
10.	Գեղարքունիք	488,867.6	108,191.0
11.	Շիրակ	226,125.1	50,043.6
12.	Տավուշ	413,473.5	91,505.6
13.	Լոռի	130,977.1	28,986.5
14.	Եղեգնաձոր	83,941.0	18,576.9
15.	Սյունիք	366,566.0	81,124.5
Ընդամենը		8,114,468.9	1,795,808.6

\*ՀՀ պետական բյուջեից աջակցություն ուղղման համակարգի առողջացման չափաքանակը հաշվարկվել է յուրաքանչյուր ՋՕԸ-ի համար տվյալ ՋՕԸ-ի ֆինանսական ճեղքվածքի  $\approx 22.1\%$ -ի չափով՝ պահելով հավասարության սկզբունքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Միջոցառումները	Նպատակը, խնդիրը, ոլորտում իրականացվելիք միջոցառման նկարագիրը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Ժամկետը	Ծանոթագրություն (ֆինանսական ապահովման վերաբերյալ)	Տեղեկատվություն միջոցառման կատարման ընթացքի մասին
<p>1) Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 10 մլն եվրո գումարի չափով թիվ CAM 1002 06 D ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում որպես ծրագրի բաղադրիչներ նախատեսվում է իրականացնել ջրային համակարգի նոր ուղղակարության մշակում: Հայաստանի Հանրապետության</p>	<p>Ռազմավարության նպատակն է ոռոգման ծառայությունների մատչելիության ավելացումը, մատուցման շարունակականության ապահովումն ու արդյունավետության բարձրացումը, ոռոգման ջրի համակարգի ընկերությունների ֆինանսական կենսունակության բարելավումը՝ ամրապնդելով ընթացիկ ծախսաձածկմանն անցման նախադրյալները, ոռոգման համակարգերի և ենթակառուցվածքի պահպանումն ու արդիականացումը,</p>	<p>Ջրային կոմիտե</p>	<p>2021 թ. 4-րդ եռամսյակ</p>	<p>դրամաշնորհ՝ 1.5 մլն եվրո գումարի չափով, ՀՀ կառավարության համաֆինանսավորում</p>	

<p>կառավարության որոշման նախագծի ներկայացում:</p>	<p>չրոգտագործողների ընկերությունների ինստիտուցիոնալ կարողությունների հետագա հզորացումը, ոռոգման համակարգին տրամադրվող պետական ֆինանսական աջակցության արդյունավետության բարձրացումը:          ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի նիստի N 33 արձանագրությամբ հավանության արժանացած «Ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման» ռազմավարության իրագործելիության ժամկետը մինչև 2022 թվականն է:</p>				
<p>2) Ոռոգման համակարգի շահագործման ծախսերի կրճատում: Ոռոգման համակարգերի հիմնանորոգման ամենամյա ծրագրի իրականացման նպատակով բյուջետային հայտի ներկայացում:</p>	<p>Ոռոգման համակարգերի տեխնիկական վիճակի պահպանում, ընթացիկ նորոգումների ապահովում, վթարավտանգ իրավիճակների հավանականության կանխարգելում: Նշված նպատակների համար անհրաժեշտ է վերականգնել ոռոգման համակարգի հիմնանորոգման ծրագիրը:</p>	<p>Ջրային կոմիտե</p>	<p>2020 թ. շարունակական</p>	<p>ՀՀ պետական բյուջե</p>	
<p>3) Մեխանիկական ջրարտադրության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման միջոցով էներգախնայողության ապահովում: Գնումների գործընթացի կազմակերպում:</p>	<p>Ինքնահոս եղանակով մատակարարվող ջրի կշռի մեծացում՝          1. Մեխանիկական ջրարտադրության սարքերի, սարքավորումների և ենթակառուցվածքների տեխնիկական գնահատում:</p>	<p>Տարածքային զարգացման հիմնադրամ           Ջրային կոմիտե</p>	<p>2020-2023 թթ.</p>	<p>վարկային միջոցներ՝ 40 մլն ԱՄՆ-ի դոլար գումարի չափով, ՀՀ կառավարության համաֆինանսավորում</p>	

	<p>2. Աշխատանքների առաջնահերթությունների սահմանում և ներդրումների իրականացման փուլային ծրագիր:</p> <p>3. Մրցութային փաթեթի/փաթեթների կազմում:</p>				
<p>4) Ջրօգտագործողների հետ կնքվող պայմանագրերի լրամշակում՝ թերվճարումների կանխման մեխանիզմների ներառում: Հայաստանի Հանրապետության կառավարության 26.12.2002 թ. N 2121-Ն որոշմամբ հաստատվող ոռոգման ջրի մատակարարման պայմանագրի նոր օրինակելի ձևի սահմանում:</p>	<p>Ոռոգման ջրամատակարարման դիմաց մուտքերի ապահովման համար ջրօգտագործող ընկերություններում նոր դերիտորական պարտքերի գոյացման կանխարգելիչ մեխանիզմների ներդրում:</p>	Ջրային կոմիտե	2021 թ. 3-րդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	
<p>5) Ջրօգտագործողների ընկերություններում անցած տարիների ընթացքում կուտակված դերիտորական պարտքերի դուրսգրման և/կամ ներման մեխանիզմների վերաբերյալ առաջարկի պատրաստում և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում:</p>	<p>Նոր դերիտորական պարտքերի գոյացման կանխարգելիչ մեխանիզմների ներդրման նպատակով պարտադիր վճարման երաշխիքների ստեղծում:</p>	Ջրային կոմիտե	2020 թ. շարունակական	Ֆինանսավորում չի պահանջվում:	

<p>6) Հաշվապահական հաշվառման վարումը հանձնել պատվիրակված մասնագիտացված կազմակերպությանը:</p>	<p>Հաշվապահական հաշվառման տվյալների հավաստիությունն ապահովելու և այդ տվյալների հիման վրա վերլուծություններ կատարելու, եզրակացություններ և գնահատականներ տալու նպատակով ջրօգտագարծողների ընկերությունների հաշվապահական հաշվառման վարումն իրականացնել պատվիրակված և մասնագիտացված կազմակերպության միջոցով</p>	<p>Ջրային կոմիտե</p>	<p>2021 թ. 2-րդ եռամսյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում:</p>	
--	---	----------------------	------------------------------	-------------------------------------	--

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ